

**«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ
Գործունեության վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն**

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ նկերությունն իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն է:

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետև՝ Ընկերություն) իրավաբանական անձ է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է Ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստող որոշակի թվով բաժնետոմսերի:

Ընկերությունը ստեղծվել է ՀՀ Կառավարությանն առընթեր Ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման վարչության կողմից 26.06.1998թ. թիվ 7 որոշման համաձայն «Ստանդարտացման, Չափագիտության և Սերտիֆիկացման կենտրոն» պետական ձեռնարկության վերակազմավորման ճանապարհով:

Ընկերությունը վերակազմավորվել է համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թ.-ի սեպտեմբերի 25-ի N1180-Ա որոշման, Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 2003 թ.-ի հոկտեմբերի 8-ի N132 հրամանով:

Ընկերությունը անվանափոխվել է «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թ.-ի հուլիսի 22-ի N1038 Ն որոշման համաձայն և ընկերության կանոնադրության նոր խմբագրությունը հաստատվել է Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 2006թ.-ի նոյեմբերի 11-ի N 234-Ա հրամանով:

2020 թվականի մարտի 25-ին կատարվել է «Ստանդարտների ազգային ինստիտուտ» և «Չափագիտության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությունների միաձուլման ձևով վերակազմակերպման պետական գրանցումը, որի արդյունքում այդ կազմակերպությունների գործունեությունը դադարեցվել է և ստեղծվել է նոր կազմակերպություն՝ «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերությունը, որը վերակազմակերպված կազմակերպությունների իրավահաջորդն է:

Ընկերության հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության:

Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» և «Ստանդարտացման մասին», Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, ու իրավական ակտերով և Ընկերության կանոնադրությամբ:

Հիմնադիրի ու ընկերության միջև հարաբերությունները կարգավորվում են ՀՀ իրավական ակտերով և ընկերության կանոնադրությամբ:

Ընկերության ֆիրմային անվանումն է «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերություն, (այսուհետև՝ ընկերություն):